

# ԹՈՒՐՔԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

## ՀՆԱՐԱՎՈՐ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԸ ՀՀ ՇՈՒԿԱՅՈՒՄ

**Հիմնաբառեր.** ներմուծում, ներմուծման սահմանափակում, մաքսային արժեք, տեղական արտադրանք, սպառողի շահ

2020 թվականը չափազանց ծանր տարի է համաշխարհային, առավել ևս, Հայաստանի Հանրապետության տնտեսության համար: Մի կողմից COVID-19 համավարակի բացասական ազդեցությունն արտադրության, առևտրի, սպառման և առհասարակ երկրի տնտեսական, սոցիալական իրավիճակի վրա, իսկ մյուս կողմից՝ Ադրբեջանի սանձազերծած պատերազմը, որին բացահայտ կերպով մասնակցություն ունեցավ նաև Թուրքիան, լիովին խաթարեցին տնտեսական զարգացման գործընթացը:

Ադրբեջանի սանձազերծած պատերազմին Թուրքիայի մասնակցության գործոնը վերջնական իթան դարձավ տարիներ շարունակ թուրքական արտադրանքի ներմուծումն արգելափակելու հարցում: Այսօր արդեն եկել է թուրքականից հրաժարվելու և դրա այլընտրանքը ՀՀ շուկայում փնտրելու ժամանակը:

Թուրքիայի հետ առևտրային հարաբերություններում Հայաստանը գլխավորապես ներմուծողի դերում է (արտահանումը չափազանց սահմանափակ բնույթ է կրում): Վերջին տարիներին մեր երկիր է ներմուծվել տարեկան նվազագույնը 137 մլն ԱՄՆ դոլարի թուրքական ապրանք, ու թեև այդ գումարը մեր տնտեսության համար զգալի է, Թուրքիայի տնտեսության մեջ չնչին դերակատարում ունի:

Ըստ Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) տվյալների՝ 2020 թ. առաջին կիսամյակում Հայաստանը Թուրքիա է արտահանել ընդամենը 374 հազար ԱՄՆ դոլարի ապրանք, որը նախորդ տարվա նույն



**Անի ԲԱԴԱԿՅԱՆ**

ՀՊՏՀ մագիստրանտ

2019 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ և ընդունվել մագիստրատուրա: Մասնակցում է «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի կողմից հայտարարված դրամաշնորհային հեղափոխական ծրագրին:




**Աստղիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀՊՏՀ մագիստրանտ

2019 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ և ընդունվել մագիստրատուրա: Մասնակցում է «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի կողմից հայտարարված դրամաշնորհային հեղափոխական ծրագրին:

<sup>1</sup> <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIForeignTradeByCountries>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

**Հայաստան-Թուրքիա առևտրաշրջանառությունը 2010–2020 թթ. (մլն ԱՄՆ դոլար)<sup>2</sup>**

ժամանակահատվածի համեմատ 72.3%-ով նվազել է և, միաժամանակ, ներմուծել մոտ 99 մլն ԱՄՆ դոլարի ապրանք՝ 14.5%-ով ավելի քիչ, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում:

Այսպիսով՝ Հայաստանի արտահանման կառուցվածքում Թուրքիայի տեսակարար կշիռը 2020 թ. առաջին կիսամյակում մոտ 0% է, իսկ ներմուծման կառուցվածքում՝ 4.9%:

Վերջին տասը տարիներին Հայաստանը Թուրքիայից ներմուծել է 137-268 մլն ԱՄՆ դոլարի արտադրանք, իսկ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2019 թվականին՝ 268.1 մլն ԱՄՆ դոլար<sup>3</sup>: Հայաստանի արտահանման կազմում Թուրքիայի տեսակարար կշիռը 2019 թվականի տվյալներով 0.1% է կամ 2.22 մլն ԱՄՆ դոլար (ոսկերչական իրեր, անմշակ մորթիներ, մարդատար ավտոմեքենաներ և այլն), իսկ ներմուծման կազմում՝ 4.9% (զծապատկեր 1):

Մաքսային ծառայության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանն ավելի քան 700 անուն ապրանք է ներմուծում Թուրքիայից: Ընդ որում, այս ներմուծումը բավական բազմազանեցված է՝ հագուստից, կոշիկից, նավթամթերքից


մինչև կենցաղային ապրանքներ, շինանյութ և այլն: Ներմուծվում է ինչպես պատրաստի արտադրանք, այնպես էլ տեղական տարատեսակ արտադրություններին անհրաժեշտ հումք:

Հայկական շուկայում 2019 թ. առկա թուրքական արտադրանքն ըստ տեսակների և արժեքների հետևյալն է<sup>4</sup>.

- հագուստ՝ 69.4 մլն ԱՄՆ դոլար,
- ցիտրուսային պտուղ՝ 10.3 մլն ԱՄՆ դոլար,
- մեքենաներ, կենցաղային սարքավորումներ և մեխանիզմներ՝ 35.3 մլն ԱՄՆ դոլար,
- նավթ և նավթամթերք՝ 24.3 մլն ԱՄՆ դոլար,
- քիմիայի և, դրա հետ կապված, արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ 23.6 մլն ԱՄՆ դոլար,
- ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 21.6 մլն ԱՄՆ դոլար:

Հայաստանը Թուրքիայից ներմուծում է հիմնականում վերջնական սպառման՝ պատրաստի ապրանքներ, որոնք ներմուծման մոտ 80%-ն են, իսկ մնացած 20%-ը բաժին է ընկնում միջանկյալ սպառման

<sup>2</sup> [https://www.trademap.org/Country\\_SelProductCountry\\_TS.aspx?nvpm=1%7c051%7c%7c%7cTOTAL%7c%7c%7c2%7c1%7c1%7c1%7c2%7c1%7c2%7c1%7c1%7c1%7c1](https://www.trademap.org/Country_SelProductCountry_TS.aspx?nvpm=1%7c051%7c%7c%7cTOTAL%7c%7c%7c2%7c1%7c1%7c1%7c2%7c1%7c2%7c1%7c1%7c1%7c1)  
<sup>3</sup> <https://b24.am/economy/260653.html>  
<sup>4</sup> <https://www.e-draft.am/projects/2801/justification>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

**Առավել շատ ներմուծվող թուրքական ապրանքների մաքսային արժեքը և կշիռը Հայաստան ներմուծվող նույն ապրանքների կազմում՝ ըստ մաքսային արժեքի, 2019 թ.**

ապրանքներին:

ՀՀ ՎԿ տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում կան շուկաներ, որտեղ կախվածությունը թուրքական ապրանքներից բավական մեծ է: Օրինակ՝ 2019 թ.-ին Հայաստան է ներմուծվել, ընդհանուր առմամբ, 6.9 մլն ԱՄՆ դոլարի բամբակե գործվածք, որի 84%-ը՝ Թուրքիայից:

Գծապատկեր 2-ում ներկայացված է Թուրքիայից Հայաստան ներմուծվող ամենամեծ մաքսային արժեք ունեցող առաջին տասը ապրանքների ցանկը, ինչպես նաև թուրքական ապրանքների տեսակարար կշիռը Հայաստան ներմուծված նույնանուն ապրանքների ընդհանուր կազմում: Սա այն ցանկն է, որի վրա հարկավոր է կենտրոնանալ թուրքական ապրանքների դեմ սահմանափակումների համատեքստում: Բացի ցանկում տեղ գտածներից, պետք է ուշադրություն դարձնել նաև թուրքական այն ապրանքներին, որոնք թեև առաջին տասնյակում չեն, բայց Հայաստանում որոշակի պահանջարկ ունեն, մասնավորապես՝ կոշիկ, կենցաղային ու շինարարական այլ իրեր: Կարևոր է շեշտել, որ այստեղ խոսքը հենց թուրքական ծագման ապրանքների մասին է, այսինքն՝ նրանց, որ արտադրվել են Թուրքիայում: ՀՀ կառավարության 2020 թվականի հոկտեմբերի 20-ի N1708-Ն որոշմամբ նույնպես շեշտադրվում են հենց թուրքական

ծագման ապրանքները: Այսինքն՝ չի կարող Թուրքիայում արտադրված ապրանքը տեղափոխվել, օրինակ, Ռուսաստան, հետո՝ Հայաստան:

Հատկանշական է, որ Թուրքիայից ներմուծվող ապրանքների մեծ մասի պարագայում Հայաստանում նմանատիպ ապրանքների, օրինակ՝ հագուստի, ցիտրուսի, շինարարական նյութերի, կենցաղային ապրանքների և այլնի արտադրությունն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով զարգացած չէ:

Կարևորելով նմանատիպ ապրանքների արտադրության զարգացումը Հայաստանում՝ միաժամանակ, այս հարցի նկատմամբ պետք է ցուցաբերել ավելի իրատեսական մոտեցում: Այս պահին՝ կարճ ժամկետում, հնարավոր չէ թուրքական ապրանքներն ամբողջությամբ փոխարինել տեղականով, հետևաբար՝ հարկավոր է գտնել այլընտրանքային երկրներ, որոնցից ներմուծվող ապրանքները որակի ու զննի չափանիշներով մոտ կլինեն թուրքականին:

Գլխավոր հարցերն են՝ ինչպե՞ս կազմակերպել այս գործընթացը, որ չտուժեն ներմուծմամբ ու վաճառքով զբաղվող տնտեսավարողները և սպառողները, ներմուծվող ապրանքների դր մասը կարող է արտադրվել Հայաստանում, ինչ այլընտրանքներ կան թուրքական ապրանքներին

և აյն:

Թուրքական ապրանքներին «փոխարինող» აյլընտրանքներ գտնելու համար ներմուծողներն ունեն ընդամենը մեկ ամիս ժամանակ:

Ըստ ՀՀ կառավարության որոշման՝ թուրքական ծագման ապրանքների ներմուծման արգելքն ուժի մեջ կմտնի 2020 թվականի դեկտեմբերի 31-ին և կգործի 6 ամիս<sup>5</sup>: Իսկ ինչո՞ւ է նման ժամկետ սահմանվել: Բանն այն է, որ այդպես են պահանջում ԵԱՏՄ կարգավորումները, և մեր երկիրը, որպես տնտեսական այդ տիրույթի անդամ, պարտավոր է առաջնորդվել նշյալ կարգավորումներով: ԵԱՏՄ օրենսդրությունը համընդհանուր մոտեցումներին դեմ արտահայտվող ամեն մի երկրի վեց ամիս ժամանակահատվածով ոչ սակազնային սահմանափակումներ և կարգավորումներ մտցնելու հնարավորություն է տալիս: Ընդ որում, այս գործընթացը կարող է շարունակական բնույթ կրել, և յուրաքանչյուր վեց ամիսը մեկ, նոր որոշում ընդունելով, արգելել ներմուծումը:

Թուրքական ապրանքների մերժումը հնարավոր է՝ շուկայում գնաճի առաջացման պատճառ դառնա, բայց դա զգալի չի լինի:

Ի դեպ, հետաքրքրական է, որ թուրքական ապրանքների ներմուծման սահմանափակման պարագայում հայկական շուկայում որևէ ապրանքի պակասուրդ չի առաջանա, քանի որ դա կլրացվի այլ շուկաներից Հայաստան ներմուծումների միջոցով կամ էլ հենց տեղական արտադրության շնորհիվ: Թեև կարճաժամկետ հատվածում հնարավոր է՝ որոշ խնդիրներ առաջանան:

Թուրքական ծագման ապրանքների ներմուծման արգելքով ոչ միայն տնտեսական բնույթի պատժամիջոց (սանկցիա) է կիրառվում Թուրքիայի նկատմամբ, այլև, անվտանգության տեսանկյունից, դադարեցվում է հայաստանյան աղբյուրներից Թուրքիայի պետական գանձարանի ֆինանսական սնուցումը:

Վերջին օրերին համացանցում շատ

են նաև թուրքական ապրանքները բոյկոտելու վերաբերյալ կոչերը: Եվ դրանք Հայաստանից չէ, որ սկսվել են, այլ Սաուդյան Արաբիայից ու գնալով ընդլայնում են իրենց աշխարհագրությունը: Սաուդյան Արաբիան պաշտոնապես էմբարգո է հայտարարել թուրքական ապրանքների նկատմամբ: Թագավորությունում սննդի ամենամեծ ցանցը՝ «թուրքական բուրգերները», փոխարինվել է հունականով, իսկ էլեկտրոնիկայի խանութների ցուցափեղկերից հեռացվել են թուրքական ապրանքները: Բոյկոտին միացել է Մարոկկոն, որտեղ Թուրքիայի հետ համաձայնագրում թուրքական ապրանքների ներմուծման հարկը 90 տոկոսով բարձրացնելու վերաբերյալ փոփոխություն է կատարվել:

Ո՞րն է թուրքական ապրանքների ներմուծման այլընտրանքը. ինչ պետք է անեն մոտ չորս հազար հայ տնտեսավարողները:

Հայաստանյան սպառողի համար թուրքական արտադրատեսակների հիմնական առավելությունը գինն է, որը պարզապես շահավետ է: Հետևաբար՝ այս առումով, անհնար չէ «փոխարինող» երկիր գտնելը:

Թուրքիայից Հայաստան ներմուծման բիզնեսում ներգրավված է մոտ չորս հազար տնտեսավարող, որոնք, ամենայն հավանականությամբ, ժամանակավոր դժվարությունների առջև կկանգնեն: Բանն այն է, որ Թուրքիայից ապրանքների ներմուծումը շահավետ է բավական ցածր մաքսատուրքի (հագուստեղենը հիմնականում ներմուծվում է կիրգամով), ինչպես նաև լոգիստիկ դյուրինության առումով: Այլ խթանող գործոններ են մեծածախ վաճառողների հետ ապառիկ ձևով աշխատանքը (երբ ձեռք բերված ապրանքի դիմաց գումարը փոխանցվում է ավելի ուշ), ինչու չէ, միգուցե նաև վստահության վրա խարսխված աշխատելաճոճը:

Թուրքական ապրանքներից պետք է հրաժարվել աստիճանաբար՝ առանց վնասելու հայկական գործաձարության ու սպառողների շահերը:

Որքան էլ թուրքական ապրանքները բոյկոտելու կոչերի նպատակը պարզ է, և

<sup>5</sup> Հիշեցնենք, որ կառավարության 2020 թ. հոկտեմբերի 20-ի թիվ 1708-Ն որոշմամբ արգելվում է վերջնական ապրանքների սպառման ներմուծումը Թուրքիայից Հայաստան, իսկ հունքի վրա առայժմ արգելք դրված չէ, <https://www.gov.am/am/news/item/14934/>:



քննարկման ենթակա չեն դրանց ազնիվ մղումները, միևնույն է, չպետք է մոռանալ ներմուծող տնտեսավարողների ու սպառողների շահերի մասին: Հայկական շուկան թուրքական ապրանքներից «մաքրելու» գաղափարը պետք է իրականացվի աստիճանաբար՝ զուգահեռ զարգացնելով նմանատիպ ապրանքների արտադրությունը Հայաստանում: Ընդ որում, սակարող է տևել մի քանի տարի, բայց եթե որոշվել է հրաժարվել թուրքականից, ապա գործընթացը պետք է այսօրվանից սկսել: Այստեղ պետությունը պետք է պատրաստ լինի օժանդակելու այն գործարարներին, որոնք կարող են տուժել թուրքական պատրաստի ապրանքներից ու հումքից հրաժարվելու ծրագրի հետևանքով:

Գործընթացը հարկավոր է սկսել պատրաստի հագուստից ու կոշիկից, այդ թվում՝ արտասահմանյան այլ ապրանքանիշների ներկայացուցչություններ բացելով ՀՀ-ում: Հումքի պարագայում հարկավոր է չշտապել, քանի որ տեղական արտադրության համար թուրքական հումքը դեռևս այլընտրանք չունի: Այժմ փոխվել են հագուստի ներկրման մաքսատուրքերի հաշվարկման ձևերը՝ ենթադրելով ավելի

բարձր մաքսային վճարների գանձում: Այս փոփոխության արդյունքում չորս միլիարդի փոխարեն Հայաստանի բյուջե կմտնի ութ միլիարդ դրամ: Այդ լրացուցիչ չորս միլիարդը կարելի է ուղղել սոցիալական լարվածության մեղմացմանը՝ տարբեր ծրագրերի ու դրամաշնորհների միջոցով դա փոխանցելով այն գործարարներին, որոնք տուժելու են մաքսատուրքերի բարձրացումից:

Հայկական շուկայում արդեն իսկ գոյություն ունեն մի շարք բրենդներ թե՛ հագուստի, թե՛ տեքստիլի, թե՛ կոսմետիկ ու խնամքի միջոցների, թե՛ տնտեսական ապրանքների ոլորտներում, որոնք և՛ գնային, և՛ որակի չափանիշներով չեն զիջում թուրքականին: Ինդիքն այստեղ ավելի շատ տեղեկատվական է: Ուստի նախ՝ կարելի է ստեղծել մի հարթակ, որը կներառի ամփոփ տեղեկություններ հայկական արտադրատեսակների մասին՝ խթանելով դրանց տարածումը հասարակության շրջանում: Սոցիալական հարթակներում որոշ անհատներ արդեն իսկ նախաձեռնել են նման արշավ, սակայն խնդիրն առավել համակարգված և արդյունավետ լուծում է պահանջում:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- |  |  |
|--|--|
| <ol style="list-style-type: none"> <li>1. <a href="https://www.petekamutner.am/Content.aspx?it-n=csCIForeignTradeByCountries">https://www.petekamutner.am/Content.aspx?it-n=csCIForeignTradeByCountries</a></li> <li>2. <a href="https://b24.am/economy/260653.html">https://b24.am/economy/260653.html</a></li> <li>3. <a href="https://www.trademap.org/Country_SelProduct-Country_TS.aspx?nvpm=1%7c051%7c%7c%7c%7c-">https://www.trademap.org/Country_SelProduct-Country_TS.aspx?nvpm=1%7c051%7c%7c%7c%7c-</a></li> </ol> | <p style="text-align: right;">TOTAL%7c%7c%7c2%7c1%7c1%7c1%7c2%7c1%7c2%7c1%7c1%7c1</p> <ol style="list-style-type: none"> <li>4. <a href="https://www.gov.am/am/news/item/14934/">https://www.gov.am/am/news/item/14934/</a></li> <li>5. <a href="https://www.e-draft.am/projects/2801/justification">https://www.e-draft.am/projects/2801/justification</a></li> </ol> |
|--|--|

**Անի ԲԱՐՏԵԳՅԱՆ**  
*Մագիստրանտ, ԱԳՅԱ*

**Աստիկ ԽԱՇԱՏՐՅԱՆ**  
*Մագիստրանտ, ԱԳՅԱ*

РЕГИОН И АРМЕНИЯ

### ВОЗМОЖНАЯ АЛЬТЕРНАТИВА ТОВАРАМ ТУРЕЦКОГО ПРОИЗВОДСТВА НА АРМЯНСКОМ РЫНКЕ

2020 год - очень сложный год для мировой экономики, особенно для Республики Армения. С одной стороны, негативное влияние пандемии COVID-19 на производство, торговлю, потребление и в целом на экономическое и социальное положение стран, с другой стороны, война, развязанная Азербайджаном, в которой Турция также приняла открытое участие.

Это было последним стимулом для бойкота против импорта турецких товаров на протяжении многих лет. Сегодня пора отказаться от продукции турецкого производства и искать альтернативу на армянском рынке.

**Ключевые слова:** *импорт, ограничение импорта, местные продукты, потребительский интерес*

**Ani BARSEGHYAN**  
*MA Student, ASUE*

**Astghik KHACHATRYAN**  
*MA Student, ASUE*

REGION AND ARMENIA

### POSSIBLE ALTERNATIVE TO TURKISH-MADE GOODS IN THE ARMENIAN MARKET

2020 is a very difficult year for the world economy, especially for the Republic of Armenia. On the one hand, the negative impact of the COVID-19 pandemic on production, trade, consumption and the economic and social situation of countries in general, on the other hand, the war unleashed by Azerbaijan in which Turkey also took an open part.

This was the final stimulus for the boycott against the import of Turkish products for years. Today it is time to give up Turkish-made products and look for an alternative in the Armenian market.

**Keywords:** *import, import restriction, customs value, local products, consumer interest*